№ 28 Փետրվարի 17 Հինգշաբթի 1883 Փետրվարի 17 Հինգշաբթի № 28

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհարազատ երեխաների մասին օրէնսդրութիւն։—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։—Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ —ԲՕՐԱԿ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ *Խաչագողի յիշատակարան։*

ԱՆՀԱՐԱԶԱՏ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ

—

Ռուս նշանաւոր բանաստեղծ Ժուկովսկու յօբելեանի տօնելը յիշեցրեց մայրաքաղաքի իրաւաբանական „Судебная Газета“ լրագրին անհարազատ երեխաների մասին եղած օրէնսդրութեան փոփոխութեան խնդիրը։ Այդ կարևոր կը լինէր մանաւանդ այժմ, երբ մշակվում է և փոփոխվում է ռուսաց ընդհանուր քաղաքական օրէնսդրութիւնը, որի համար և կազմված է Ս. Պետերբուրգում նշանաւոր իրաւաբաններից մի յանձնաժողով։

Վերև յիշված իրաւաբանական կամ դատաստանական լրագրին տեղիք տուեց այժմ, Ժուկովսկու յօբելեանի առիթով խօսելու անհարազատ երեխաների մասին օրէնսդրութեան վրա այն հանգամանքը, որ ինքն Ժուկովսկի անհարազատ երեխայ էր, ծնված էր եկեղեցական ամուսնութիւնից դուրս։

Մինչև այժմ նախապաշարմունք կայ արհամարհելու անհարազատ երեխաներին, անուանելով նրանց ապօրինի։

Երկար ժամանակ ամբողջ մարդկութեան մէջ, նոյնպէս և Ռուսաստանում ապօրինի երեխաները զուրկ էին ամեն հասարակական, քաղաքացիական իրաւունքներից, նրանք արհամարկված էին և պատժվում էին իրանց ծնողների մեղքերի համար։ Ապօրինի որդին ինքն ոչինչով մեղաւոր չը լինելով, որ ծնվեցաւ ոչ թէ եկեղեցական ամուսնութիւնից, այլ բնական ամուսնութիւնից, իր ամբողջ կեանքը կրում էր իր վրա ամօթի դրոշմը, հալածված էր հասարակութիւնից, օրէնքից, զուրկ էր ազգանունից, պատից, կարողութիւնից, իրաւունքներից։

Բայց նոյն անհարազատ երեխաներից որքան յայտնվեցան երևելի անձինք, որոնք պատիւ բերեցին թէ իրանց հայրենիքին և թէ ամբողջ մարդկութեանը։ „Судебная Газета“ խօսելով Ժուկովսկու մասին, ասում է թէ նա անհարազատ երեխայ լինելով՝ եղաւ ռուս ամենաերևելի բանաստեղծներից մինը, ապօրինի երեխայ լինելով նա եղաւ ռուսաց ամենանշանաւոր թագաւորներից մինի դաստիարակ, այն թագաւորի, որ ազատեց միլիոնաւոր ճորտեր։

Դատաստանական լրագիրը պատմում է մեզ հետևեալը։ Դեռ կատարինէ II կայսրուհու ժամանակ ապօրինի զաւակները ոչինչ իրաւունքներ չունէին, նոյն իսկ ապօրինի զաւակների ծնողները պատժվում էին օրէնքով, իսկ իրանք զաւակները իրանց ամբողջ կեանքը հալածանքի առարկայ էին։

Միայն Պետրոս Մեծի ժամանակից կառավարութիւնը սկսում է հոգալ անհարազատ զաւակների մասին, բայց ոչ թէ նրանց քաղաքական իրաւունքներ տալու նպատակով, այլ բուն վարչական, պետական նպատակներով. իւրաքանչիւրը անհարազատներից կարող էր դառնալ հարկատու ոյժ, բացի սրանից նոր էին հասկացել որ նա պիտանի էր պետութեան համար և որպէս զինուոր։

Միայն ներկայ դարի սկզբներում ռուսաց օրէնսդրութիւնը փոքր ինչ մեղմացաւ դէպի ապօրինի զաւակները և այն էլ ոչ թէ փոփոխելով նրանց վերաբերութեամբ ամբողջ օրէնսդրութիւնը, այլ մտցնելով օրէնքների մէջ մի քանի մեղմացնող, բացառական դիպուածներին համեմատ յօդուածներ։ Իսկ ապօրինի զաւակների, եկեղեցական ամուսնութենից դուրս ծնված մարդկանց ընդհանուր դիրքը, մնաց նոյնը թէ օրէնքի և թէ հասարակութեան առջև։ Այժմ էլ գործող օրէնքին համեմատ, եկեղեցական ամուսնութիւնից դուրս ծնված զաւակները զուրկ են մի քանի քաղաքական կամ կալուածական իրաւունքներից, չունեն իրանց հօր ազգանունը ունեն միայն հասարակաց քաղաքական իրաւունքներ։

Լրագիրը վերջացնում է իր խօսքերը հարցնելով թէ՝ նոյն իսկ եթէ ծնողները, որոնք եկեղեցական ամուսնութիւնից դուրս ապրելով ապօրինի երեխային կեանք են տալիս, սաստիկ մեղաւոր են և օրէնքով արժանի են պատժվելու,—բայց ի՞նչով մեղաւոր է երեխան, որի կամքից կախված չէր ծնվել ապօրինի զաւակ, այլ նա ծնվեց նոյն բնական կերպով, ինչպէս ծնվում է իւրաքանչիւր մանուկը, իր մօր արգանդում տեղեկութիւն չունենալով մարդկային օրէնքների մասին, այլ ենթարկվելով միմիայն բնութեան օրէնքներին, որոնք միշտ անփոփոխ են։

Եւ մեր մարդասէր դարում բոլորովին անմեղ երեխան պատժվում է, հասակ առնելով, քաղաքացի, մարդ դառնալով, նա իր ամբողջ կեանքը զուրկ է մնում մի քանի քաղաքական իրաւունքներից։

Վերև յիշված յօդուածի վրա խօսելով և նրանից կտորներ արտատպելով „Моск. Телеграфъ“ ռուս լրագիրը վերջացնում է իր յօդուածը հետևեալ խօսքերով։

„Այդ դաղափարը ապօրինութեան մասին ամօթալի կերպով բաժանում է ամբողջ մարդկային հասարակութիւնը երկու որոշ բաժինների վրա, նա ընդդէմ է մեր ժամանակի մարդասիրական սկզբունքներին։

Բայց այնու ամենայնիւ մարդկութեան ամօթի համար, սիրտը վրդովեցնող դաղափարը շարունակում է իր առաջվայ ոյժը պահպանելու, բարոյապէս այլանդակելով և զրկելով հաղարաւոր մարդկանց, որոնք դժբաղդութիւն ունեցան, իրանց կամքի դէմ, ծնվել ծնողներից, որոնք կենակցելու համար եկեղեցու օրհնութիւնը չէին ստացել։“

Դատաստանական ռուս լրագիրը և նրա հետ „Московскій Телеграфъ“ լրագիրը այն միտքն են յայտնում որ մեր ամբողջ օրէնսդրութեան մէջ չը կայ մի յօդուած, մի կէտ, որ աւելի պէտք ունենայ վերաքննութեան, քան թէ ապօրինի զաւակների մասին օրէնքը, որին անհրաժեշտ է հիմնվել կենսական, բնական, մարդասիրական, տիեզերական ճշմարտութեան վրա։

Գ. Ա.

ԽԱՉԱԳՈՂԻ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Քաւոր Պետրոսը իր ձեռքով մխիթարեց այն զիւղացու դժբախտութիւնը, որի տանը հիւրասիրվեցանք մենք։ Քառորդ ժամից յետոյ մեր սայլակը արդէն գտնվում էր ճանապարհի վրա։

Սպահանցի քահանային եկեղեցու շինութեան համար հանդանակած դումարից յետոյ, քաւոր Պետրոսի այդ երկրորդ բարեգործական վարմունքը ինձ աւելի զարմացնում էր։—Զարմացնում էր, զլխաւորապէս այն պատճառով, որ եկեղեցու շինութեան գործում նրան թելադրում էր հաւատը, կրօնի զգացմունքը և վերջապէս ազգային նախանձախնդրութիւնը։ Իսկ այստեղ ինչ կար, որ զարթեցնէր նրա կարեկցութիւնը։ Մի՞թէ մի ամբողջ սովատանջ բազմութեան թշուառութիւնը կարող էր ազդել նրա քարացած սրտի վրա։

Այդ խորհրդածութիւնները զբաղեցնում էին իմ միտքը, երբ մեր սայլակը դանդաղ կերպով առաջ էր գնում։ Ձիաները ամբողջ օրը չարչարված լինելով, չէինք կամենում աւելի յոգնեցնել նրանց։ Այդ միջոց էր տալիս ինձ քաւոր Պետրոսից բացատրութիւններ ինդրելու։

—Բարեգործութիւնը լաւ բան է, հարցրի նրանից։

—Ես չեմ հասկանում ինչ առիթ տուեց քեզ յանկարծ մի այսպիսի հարց առաջարկել ինձ։

—Ինձ առիթ տուեց ձեր այսօրվայ վարմունքը։

—Լաւ բան է։

—Ուրեմն մենք ինչու ենք խարում, կողոպտում, սպանում, և ամեն տեսակ եղեռնագործութիւններից յետ չենք մնում։

—Մենք կողոպտում ենք՝ ժլատ հարուստներին։ Իսկ աղքատներին պէտք է օգնել։

Գիշերային լռութեան պահուն, անապատի մէջ, ճանապարհի վրա, առանձնացած մի խստասիրտ մարդու հետ, այս տեսակ վիճաբանութիւնը կարող էր վտանգաւոր հետևանքի հասցնել։ Իմ տապարը, որ միշտ սայլակի նստարանի տակ էր պահված լինում, հանեցի և խրեցի գօտիս մէջ։ Լուսնեակի լուսով քաւոր Պետրոսը նկատեց այդ։ Իսկ ես նրա դէմքի վրա նկատեցի մի արհամարհական ժպիտ։

—Դուք ասում էք, թէ աղքատներին և թշուառներին պէտք է օգնել։ Շատ գեղեցիկ միտք է, շարունակեցի ես։—Իսկ ողորմելի Թաթար Ասկէրը աղքատ և թշուառ չէր, ինչու հրամայեցիք ինձ սպանել նրան։

—Ես միջոցների մէջ խտրութիւն չեմ դնում։ Եթէ Ասկէրին սպանել չը տայի, չէի կարող կողոպտել բուխարեցի հարուստ վաճառականին։ Իսկ բուխարեցուն կողոպտելով, ես այսօր մի ամբողջ գիւղ ազատեցի սովատանջ մահից։

Քաւոր Պետրոսի խօսքերը որքան էլ ինձ տարապայման թւէին, այսու ամենայնիւ, նրանք բըղխում էին հաստատ համոզմունքից, որոնց համեմատ ես գործում էր նա։ Նա իր դաղափարների մէջ յաջորդաբար էր վարվում։ Այնքան ժամանակ նրա մօտ ծառայելով, ես վկայ էի եղել շատ անդրքերի և միշտ նկատել էի, որ նա մի առանձին կատաղի ատելութիւն ունէր դէպի ժլատ հարուստները,—որոց ընդհանուրակն, նա երբէք չէր վըշտացրել աղքատին և միշտ թշուառների բարերար էր հանդիսացել։ Բայց ես յիշեցի մի պայման, որի մասին մինչև այսօր առիթ չէի ունեցել խօսելու նրա հետ։ Ես հարցրի.

—Դուք, որ միշտ բարի էք եղել դէպի աղքատը, դէպի հարստահարեալը և դէպի թշուառը, ինչու մինչև այսօր չը կատարեցիք ձեր խոստմունքը մի անձի վերաբերութեամբ, որ ձեր պատճառով թշուառացաւ։

—Ի՞նչ անձ։

—Իմ վարպետը։ Զէ՞ք յիշում, երբ առաջին անգամ մենք վճռեցինք թողնել մեր հայրենիքը և օտար աշխարհ գնալ, մենք ուխտեցինք փող վաստակել և այն մարդու կրած բոլոր ՁԼամների փոխարէնը վճարել։ Մոռացել էք։

—Չեմ մոռացել։ Երբ կը հասնենք ԻՋևանը, դու ինձ յիշեցրու, ես ցոյց կը տամ քեզ մի նամակ, որից դու կը տեղեկանաս, որ ես վաղուց կարգադրութիւն արել եմ այդ մասին։ Ես ուղարկել էի մի գումար մեր գիւղի քահանային, խնդրելով, որ հաւտնէ քո վարպետին, բայց պատասխան ստացայ, թէ այն օրից, որ նրան փախցրին բանտից, նրա մասին ոչինչ տեղեկութիւն չը կայ, թէ ինքը և թէ իր ընտանիքը անյայտացել են։—Բայց ինձ զարմացնում է մի բան, Մուրադ, թէ ինչը առիթ տուեց քեզ այսպէս կասկածաւոր կերպով վերաբերվել դէպի իմ գործունէութիւնը։

Ես ոչինչ չը պատասխանեցի։

Ը.

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՐՆՇՏԱԿԸ

Անցել էր աւելի քան մի ամիս այն օրից, որ մենք թողեցինք հրէայ սեղանաւորի գտնված քաղաքը։

Շատ երկար կը լինէր, եթէ մանրամասնաբար նկարագրէի մեր ամբողջ ճանապարհորդութիւնը։ Իմ յիշատակարանի այս գլուխը ես կկազմեմ չափ համառօտում եմ,—համառօտում եմ, որովհետև չուզում եմ ծանրաբեռնել ընթերցողին մի նոր դէպքի հետ, որը իմ սրտին շատ մօտ է...

Կարճ կասեմ, անցնելով զանազան գաւառներից և փոքրիկ քաղաքներից, մենք արդէն գտնվում էինք Կայսրութեան հարաւային գաւառներում Սև ծովի եզերքի մօտ։ Բնութիւնը այստեղ փոխվեցաւ, անապատներից աղատվեցանք, երկիրը աւելի լեռնային էր։

Ամառնային գեղեցիկ առաւօտներից մէկն էր։ Մեր ճանապարհը գնում էր նեղ ձորի միջով, որ պատած էր խիտ անտառներով։ Ճանապարհի մէկ կողքով զուգընթաց կերպով ձգվում էր խորին անդունդ, որի յատակում հաղիւ նշմարվում էր լեռնային գետակը։ Իսկ ճանապարհի միւս կողքին բարձրանում էին ապառաժներ, որ ծածկված էին ծառերով։

Ինձ յայտնի չէր, թէ ո՞ւր էր տանում այդ ճանապարհը, կամ ինչ էինք որոնում այդ վայրենի, համարեա անմարդաբնակ լեռների մէջ։ Ես միայն հիացած էի բնութեան գեղեցկութիւններով։ Երբեմն ես լսում էի առուակների խոխոջմունքը, որոնք թագուն վազում էին թփերի միջով. երբեմն տեսնում էի նրանց ջրվէժը, որ նոր ծագող արեգակի առաջին ճառագայթներից ծիածանի նման կամար էին կազմում կանաչազարդ լեռան վրա։ Տեղ-տեղ հանդիպում էին հին ամրոցների աւերակներ, որ մնացել էին թաթարների տիրապետութեան ժամանակներից։

Կրկնում եմ, որ ես ամենևին տեղեկութիւն չունէի, թէ ինչ նպատակով ենք ճանապարհորդում։ Միայն քաւոր Պետրոսը մի բան որոնում էր այն լեռների մէջ. նա չտապում էր, որքան կարելի է, չուտով հասնել ծովի ափերին։

Մինչև կէսօր մենք գնում էինք մի և նոյն նեղ ճանապարհով, որ երկու կողմից սեղմված էր ծառերով։ Բայց դեռ ոչ մի բնակութեան չէինք հան-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 15 փետրվարի

«Մշակի» 24-դ համարի ներքին լուրերի մէջ տպված էր մի տեղեկութիւն Գողթան գաւառի Ալլափ (գուցէ Ալլահի) կոչված գիւղի ինքնուս բժշկների խելագարներ բժշկելու եղանակի մասին: Այդ տեղեկութեան մէջ ասւում է՝ որ խելագարներին բժշկելու համար նրան 2—3 օր շարունակ պար են ածել տալիս: Իրաւ է՝ այդ բժշկութեան միջոցը գործ է դնվում, բայց ոչ միայն Գողթնի մէջ, այլ որքան ինձ յայտնի է, ամբողջ Ղարաբաղի կողմերումն էլ և այդ միջոցով բժշկում են ոչ ամէն տեսակ խելագարներին, այլ նրանց, որոնք բռնված են վիշտերից կամ երկիւղից պատճառվող մի տեսակ հոգեկան հիւանդութեամբ, որը տեղական բարբառով «հըզլացաւ» է ասվում: Պար ածելը շարունակում են ոչ միայն 2—3 օր, այլ մինչև 7 օր և ամէն անգամ, երբ հիւանդը դադրում է պարելուց՝ նրան նստեցնում են և երգել տալիս: Թէ պարել տալու և թէ երգել տալու համար հիւանդին ընկերակցում է մի ուրիշ պարող կամ երգող, որով ինքը հիւանդը յօժարութեամբ շարունակում է պարել կամ երգելը: Ծեծելով ստիպմամբ պար ածել տալը, իմ կարծիքով, պատահում է այն հանգամանքներում, երբ հիւանդութիւնը համապատասխան չէ լինում և այդ դէպքերում (այս, երբ ստիպմամբ են պար ածել տուել) հետևանքը միշտ անբարեյաջող է եղել, թէ ոչ—ինձ յայտնի են դէպքեր, որ այդ միջոցով բարեյաջող հետևանքների են հասել:

Որովհետև այսպիսով ուշադրութիւն դարձվեցաւ մեր ինքնուս բժշկների վրա՝ ես արժան եմ համարում այս անգամ մատնացոյց անել նրանցից մէկին, որը իր ինքնուսութեամբ կարողանում է մրցել ամենալաւ բժշկների հետ, եթէ որ արդէն մի քանի հանգամանքներում գերազանցում էլ չէ: Այդ անձը Ներքին-Ագուլիսի ծխական քահանայ Յակովբ Տէր-Անդրէասեանցն է, որ թէև ոչ մի օրինաւոր ուսումնարանում ուսում չէ ստացած, բայց ինքնուսութեամբ, իր բնական տաղանդով, իրան հասցրել է զարգացման այն աստիճանին, որի վրա կանգնած մեր հայ, ծխական քահանաներից խիստ սակաւներին կարելի է տեսնել: Բոլորովին համապատասխան իր կոչմանը՝ նա եղել է և է միշտ իր ծուխին արժանաւոր հովիւը. ժողովուրդը դիմել է նրան ամենայն մի ծանրակշիռ հարցերի ժամանակ և նա ամէն դիպուածում նպաստել է իր լուրջ խորհուրդներով: Նա էր՝ որ հիմնեց Ներքին-Ագուլիսի հոգևոր դպրոցը և իր տեսչութեան ներքոյ պահելով շարունակ եօթը տարի՝ հասցրեց նրան իր նախկին բարեկարգ վիճակին:

Բայց եթէ այդ դպրոցը այժմ փակված է և ժողովուրդը ամբողջ 15 տարիների ընթացքում չը կարողացաւ մի փոքր ի շատէ բարեկարգ ուսումնարան հաստատել—դորա համար ես կը խնդրէի մեր համազգայիներին դիմել կրկին արժանապատիւ հօր՝ նրան ձգելով ուսումնարանի վերականգնման գործը. անտարակոյս եմ որ նա այս անգամ ևս չի զլանայ իր օգնութիւնը իր սիրելի հօտի համար և ամենայն արդելքների առաջն առնելու միջոցները գտնելով՝ գլուխ կը հանէ իր մտադրած գործը:

Նրա արժանաւորութիւնները լաւ ճանաչել էր և բարձր հոգևոր կառավարութիւնը և ըստ արժանւոյն վարձատրել պատւոյ այլ և այլ նշաններով՝ դեռ հանդուցեալ Մատթէոս կաթողիկոսի օրով, բայց ցաւօք սրտի պէտք է ասել, որ այժմեան բարձր հոգևոր կառավարութիւնը սկսեց փոքր ինչ խէթ աչքով նայել նորան, որովհետև նա իր սեպհական արժանաւորութիւնը ճանաչելով չէր փայփայում:

Բացի իր կոչումին վայել գիտութիւնները՝ նա լաւ հմուտ է օրէնքի, հմուտ անտեսագէտ է, մի և նոյն ժամանակ գեղեցիկ նկարիչ է և ունի բաւական թուով նկարներ զանազան եկեղեցիներում, մի և նոյն ժամանակը հմուտ ճարտարապետ է, որի նախագիծներով շինված են բաւականաչափ շինութիւններ:

Բժշկութեան գալով՝ գիտութեան այդ ճիւղի մէջ արած նորա յառաջադիմութիւնը յիրաւի զարմանալի և ուշադրութեան արժանի է. երկարախօս չը լինելու համար կասեմ այսքանը, որ շատ հեշտութեամբ բժշկում է ամէն տեսակ ներքին և արտաքին հիւանդութիւնները և իր բժշկական գործունէութիւնների ժամանակ խիստ սակաւ անգամ է ստիպված լինում քաղաքային բժշկի խորհրդին դիմելու: Նրա փրկարար օգնութիւնները վայելել են համարեա բոլոր շրջակայ գիւղերի բնակիչները, մանաւանդ յանկարծահաս դիպուածներում: Նա ինքը պատրաստում է հարկաւոր դեղօրայքը և պահում է մի կարգին դեղատուն, ունի բժշկութեան և վիրաբուժութեան հարկաւոր բոլոր գործիքները, վիրահատից սկսեալ մինչև ելէկտրական մեքենան: Նա այնպէս նուիրված է իր սիրած արհեստին, որ վերջին ժամանակումս սկսել է լատիներէն գրելն ևս սովորել:

Այս տողերը գրելուց ես յիշում եմ՝ որ ռուսաց լրագիրներում դեռ նոր ժամանակներումս յատկապէս ուշադրութիւն էր դարձված բժշկութեան հմուտ ռուս ծխական քահանաների պաշտօնի վրա, ուրեմն կարելի է ասել, որ այդ կողմից մի գեղեցիկ բացառութիւն է կազմում Գողթնը:

Ս. Մակարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ պ. Յ. Յովհաննիսեան մեզ գրում է: «Անցեալ նամակումս, որ տպած էր «Մշակի» № 212 մէջ, ես յայտնել էի իմ կարծիքս պրոֆէսսոր Պատկանեանի դասախօսութիւնների մասին: Իսկ «Մեղու» լրագրի № 138 մէջ դուրս եկաւ մի անվայել թղթակցութիւն իմ համալսարանական ընկերոջից: Նախազգալով որ հայհոյանքից աւելի ոչինչ չեմ կարող ստանալ ուսանող պ. Կ. Եաղուբեանցից, ես աւելորդ եմ համարում անգամ մի քառ պատասխանել: Իսկ իբրև մի լաւ ապացոյց պ. Պատկանեանի օգտաւէտ գործունէութեան, հաղորդում եմ այս լուրը: Իմ թղթակցութիւնից յետոյ, չը գիտեմ ինչից վրդովված, պատուելի պրոֆէսսորը կատարելապէս դադարեցրեց իր դասախօսութիւնները: Երևի հայոց հին գրականութիւնն ու պատմութիւնը այնքան աղքատ են նիւթերով, որ հաղիւ բաւականացան միայն գիտական պրոֆէսսորի երկու դասախօսութեան»:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Մարդասիրական ընկերութիւնը, իր տարեկան հաշիւը տպել է և ցրվում է անդամների մէջ: Ընդհանուր ժողովը փետրվարի 12-ին կայանալու է: Ցեմենք թէ ընկերութեան այս տարվան ցոյց տուած դեֆիցիտը ինչ ազդեցութիւն կունենայ անդամների վրա: Յուսանք արդեօք որ այդ հաշիւների համար, առանց կողմնապահութեան և առանց ընդունված հին ձևերին հետևելու, կանօնաւոր քննութիւններ և վիճաբանութիւններ կը լինեն»:

—

Մեզ գրում են Բագուից հետևեալը: «Սպանութիւնները և գողութիւնները անընդհատ շարունակվում են մեզանում: Նորերումս սպանվել են զարձեալ մի թուրք և մի ուրիշ անյայտ մարդ մահացու կերպով վիրաւորվել է: Մի քանի օր առաջ մի անյայտացած գերմանացի աղջկայ դիակը գտել են ճանապարհում: Սպանվածը աշակերտուհի էր Պրիուտ անուանված որբանոցում»:

—

Կուբանեան նահանգի ԵՅՍԿ քաղաքից մեզ գրում են հետևեալը: «Այստեղ մի պանդուխտ տրապիզոնցի խեղճ հայը հոգին աւանդելով, թողեց որը կինը և երկու որը փոքրիկ զաւակներ: Հանդուցեալի ռուս տան տէրը, ինքն խեղճ մարդ լինելով, դիմում է քաղաքիս հարուստ հայերին որ օգնեն իրանց հայրենակցուն: Բայց բոլորն էլ մերժում են, ասելով որ այս տարի չեն կարող, առուտուր չը կայ: Այստեղ 40 տան չափ հայեր կան, նրանց մէջ շատ հարուստներ էլ կան: Մէկը որ ամենից հարուստ է, ասում են հարիւր հազարից աւելի կարողութիւն ունի, ինքն 60 տարեկան է և անզաւակ,—նա էլ մերժում է հանգուցեալի ընտանիքին օգնել, որ գոնէ հնչեցնելն թաղեն: Այստեղի հայերը բոլորն էլ նորնախիջևանցիք են, ունեն մի եկեղեցի և մի քահանայ: Ժամասացութեան ժամանակ 40 տուն հայերից կը տեսնէք եկեղեցում մի երկու մարդ միայն, մնացածները երբէք եկեղեցի չեն գալիս. Տանը երբէք հայերէն չեն խօսում այդ հայերը, ասելով, որ հայերէն լեզուն հաց չի տայ: Ուստի նարան ամենևին չունեն այստեղի հայերը»:

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ հեռագիր է ստացվել, որ փետրվարի 15-ին Էջմիածնից ուղևորվել է դէպի Թիֆլիս նոր նշանակված թեմական առաջնորդ, Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանց:

—

Թիւրքաց Հայաստանից եկած մարդիկ պատմում են հետևեալը Էրզրումի շարժման մասին: Բազմաթարկեալ հայերից մէկն էլ մի երիտասարդ Ալեքսանդր Աթալիկեանն է, որին տաճիկները գցել են մի հորի մէջ և 5 օր շարունակ այդ հորի մէջ պահել են: Այժմ ազատվելին հիւանդանոցում պառկած է:

—

Շնորհակալութեամբ ստացանք Բերլինից, պրոֆէսսոր Բուղոլֆ Վիրխովից, նրա նոր աշխատանքը կովկասեան հնութիւնների իր արած հետազօտութիւնների մասին, որոնք տպված են գրքի կոչման ձևով Բերլինի Անթրոպոլոգիական ընկերութեան հրատարակութեան մէջ, որ խմբագրվում է նոյն իսկ պրոֆեսոր Վիրխովից և կրում է «Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte» վերնագիրը: Այդ մեր վերջին ստացած գրքոյկը ամփոփում է ընկերութեան նիստը անցեալ 1883 թվի յուլիսի 15-ի: Մեզ անչափ թանգ է որ հրաշակաւոր գիտնականը միշտ պատիւ է անում յիշելու մեզ, միշտ ուղարկելով մեզ իր գեղեցիկ և վերին աստիճանի հետաքրքիր գրուածները:

—

Շնորհակալութեամբ ստացանք Վենեցիայի Մխիթարեաններից նրանց ուխտի միաբան հայր Մինաս Նուրիխանի հրատարակած գիրքը «Պատմութիւն ժամանակակից» վերնագրով: Դա գրքի առաջին մասն է և ամփոփում է իր մէջ նորագոյն պատմութեան 1814—1848 թվականները:

դիպել և ոչ մի մարդու երես չէինք տեսել: Շարունակել ուղին անհնարին էր, որովհետև ձիաները սաստիկ յոգնած էին: Պէտք էր փոքր ինչ հանգստանալ: Մենք կանգնեցրինք սայլակը մի տեղում, ուր ձորի միջով անցնող գետակը աւելի բարձրից էր հոսում և ջուրը բոլորովին մատչելի էր: Իմ առաջին հոգսը եղաւ ձիաները ջրել և նրանց կեր տալ: Յետոյ սկսեցինք յաղեցնել և մեր քաղցը:

Ճաշելուց յետոյ քաւոր Պետրոսը նստած էր մի ծառի հովանու ներքոյ, լուռ մտախոհութեան մէջ էր գտնվում: Սատանան գիտէ, թէ ինչ էր մտածում նա: Նրա այս տեսակ լռութիւնը միշտ նախագուշակում էր մօտալուտ փոթորիկ: Ես ձանձրացայ և մտայ անտառը փոքր ինչ ծառերի մէջ մտնդալու համար:

—Հեռու չը գնաս, զգուշացրեց նա:

—Ինչու:

—Այս տեղերը խիստ երկիւղալի տեղեր են:

—Ես ինձ հետ կը վեր առնեմ տապարս:

Այս զէնքը իմ մարմնի անբաժանելի անդամներից մէկն էր:

Զարմանալի բան է, լինում են այնպիսի բոպէներ, երբ հասակ առած մարդն անգամ երեխայ է դառնում: Իմ մանկութեան զուարճութիւնները միտս եկան. սկսեցի քաղել և ուտել վայրենի պտուղներ: Նրանք անզգալի կերպով հրապուրում էին ինձ աւելի հեռու և հեռու դէպի անտառի խորքը: Ես բոլորովին մոռացայ քաւոր Պետրոսի պատուէրը:

Յանկարծ իմ ականջին զարկեց մի ձայն. նա աւելի նման էր խուլ հառաչանքի: Ես մօտեցայ: Ձայնը կրկնվեցաւ: Պարզ որոշեցի, դա կանացի ձայն էր, որ լսելի էր լինում ոչ այնքան հեռուից: Ես թանդնվեցայ թուփերի մէջ և այնտեղից սկսեցի դիտել: Ինչ եմ տեսնում.—մէկ մանկահասակ աղջիկ, չոքած գետնի վրա, գրկել էր մի տղամարդի ոտքերը, աղաչում էր, պաղատում էր խնայել իր կեանքին: Տղամարդը կանգնած, բռնել էր նրա մազերից, և վայրենի կատաղութեամբ պատրաստվում էր սպանել: Հէնց որ նա սուրը բարձրացրեց, ես կայծակի արագութեամբ վրա հասայ: Իմ հասնելը և տապարս զարկը կատարվեցաւ մի և նոյն րոպէում: Նա ընկաւ գետնի վրա:

Աղջիկը աղատված էր:

Զարագործը լողում էր արեան մէջ: Նա իր գազանային դէմքը դարձրեց դէպի ինձ, արձակեց մի քանի հայհոյանքներ և լռեց...

Ես սարսափելի խռովութեան մէջ ընկայ լսածս հայոց լեզուի բառեր էին: Ուրեմն իմ ձեռքը շաղախվեցաւ մի հայի արեան մէջ, որը մահուան տաղնապի րոպէում, մոռանալով իրան, իր հայհոյանքները արտասանեց մայրենի լեզուով:

Այստեղ անպատճառ պէտք է մի գաղտնիք լինի, մտածեցի ես և դարձայ դէպի աղջիկը, որ զարհուրած նայում էր իմ վրա:

—Ո՞վ ես դու:

—Իմ հայրն ու մայրը մեռան խօլերայից:

—Այդ մարդը ինչու էր սպանում քեզ:

—Գիւղացիք ինձ հաց էին տալիս. ես նրանց համար գուշակում էի...

—Ես այդ չեմ հարցնում:—Այդ մարդը ինչու էր սպանում քեզ:

—Նա լաւ մարդ չէ... նա շատ վատ մարդ է...

—Ինչպէս ընկար նրա ճանկը:

—Ինձ բռնեց, երբ մի օր դառնում էի գիւղից:

—Յետոյ:

—Տարաւ անտառը... այնտեղ ընկերներ ունէր, բոլորը չար մարդիկ էին... բոլորը աւազակներ էին...

—Ի՞նչ արեցին քեզ:

—Չարչարեցին... շատ չարչարեցին...

—Էլ ինչու էին սպանում քեզ:

—Ես ասեցի, եթէ ինձ բաց չը թողնէք, կը մատնեմ ձեզ:

—Ի՞նչ բանում պէտք է մատնիր:

—Նրանք թուղթ փողեր էին շինում:

—Դու մատնեցիր:

—Չը մատնեցի: Ինձ տուին այդ մարդու ձեռքը, որ սպանէ ինձ:

Դաղտնիքը մասամբ պարզվեցաւ:

—Այն մարդիկը հեռու են կենում:

—Այդ անտառի մէջն են:

—Դու ճանաչում ես նրանց բնակարանը:

—Ճանաչում եմ:

—Կարող ես ինձ ցոյց տալ:

—Ա՛խ, ես չեմ գնայ այնտեղ, ես վախում եմ...

—Դու գիտես ինչ աղգից են նրանք:

—Ես շատ լեզուներով խօսում եմ, բայց նրանց լեզուն չէի հասկանում:

—Կարող ես ինձ տանել նրանց մօտ:

—Մի գնացէք նրանց մօտ. նրանք լաւ մարդիկ չեն:

Վերջին խօսքերը մի այնպիսի զգալի կերպով արտասանեց խեղճ աղջիկը, որ ես համոզվեցայ իսկոյն չը գնալ աւազակների բնակարանը և վճռեցի նախ այդ անցքը յայտնել քաւոր Պետրոսին և ապա սպասել նրա կարգադրութեանը:

Աղջիկը կը լինէր հաղիւ տաս և ութ տարեկան: Նա ցիգանուհի էր, բայց ոչ Ռուսաստանի ցիգաններից, այլ հեռաւոր երկրներից եկած, բայց ինչ երկրներից,—նա բացատրել չը կարողացաւ: Նրան կոչում էին Նէնէ: Նրա հայրը ածում էր արֆայի վրա, մայրը երգում էր, իսկ ինքը պար էր գալիս: Այդ պարապմունքով թափառում էին և դրանով ապրում էին: Ծնողները մինը միսիր յետոյ, խօլերայից բռնվելով, մի շաբաթվայ մէջ մեռան: Նէնէն մնաց որբ և անտէր: Նա շարունակեց այնպէս թափառել գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, մարդկանց համար գուշակութիւններ էր անում, հմայում էր և փող էր ստանում:

Նէնէն իր ցեղին յատուկ լղարիկ կազմուածք ունէր, բայց սաստիկ դիւրաթեք, սաստիկ առաջադիմական էր նա: Առհասարակ մի գեղեցիկ նրբութիւն արտափայլում էր նրա մարմնի իւրաքանչիւր գծերից: Աչքերը սև և կրակոտ էին. դէմքը նոյնպէս թուխ էր, որպէս մազերը: Բայց որքան կեանք կար նրա հայացքի մէջ, որքան պարզութիւն կար նրա խօսքերի մէջ...

Վերադառնալով քաւոր Պետրոսի մօտ, ես չգիտէի ինչ տեսակ հաշիւ և համար տամ իմ անտառում կատարած գործողութեան մասին: Նա հեռուից տեսնելով ինձ Նէնէի հետ միասին, հարցրեց, ասելով.

—Որսորդութիւնդ յաջողակ է երևում. մենակ գնացիր, զոյգով վերադարձար:

Նա նստած էր մի և նոյն ծառի հովանու ներքոյ, ուր առաջ թողել էի նրան: Ես ոչինչ չի պատասխանեցի, տարայ Նէնէին սայլակի մօտ: Խեղճ աղջիկը այնպէս շուտով մտերմացաւ ինձ հետ, որ իսկոյն հարցրեց.

—Ասեղ ունես:

—Ի՞նչ ես անում:

—Դրանք պէտք է կարկտեմ:

Նա ցոյց տուեց իր պատառոտած հագուստը:

Ես Նէնէին թողեցի սայլակի մօտ և շտապեցի դէպի քաւոր Պետրոսը:

(Կը շարունակվի)

չրջանը։ Գիրքը տպված է Ս. Ղազարի վանքում 1881 թվին։ Գիրքը գրված է Կ. Պոլսի հայոց բարբառով, միշտ նոյն անճոռնի ուղղագրութեամբ. դ-ի տեղ տ, բ-ի տեղ պ, և այլն և այլն։

—

Դուրս եկաւ «Վարժարան» ամսագրի փետրվարի տետրակը, այսինքն № 7։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 6 փետրվարի

Ամենուն աչքը Պոլիս է. ինչ կընէ Պոլիս. այս հարցումը կը լսես շատ բերնէ։ Պոլիս գործելու փափաք ունի, եռանդ ունի, և այս օրերս մանաւանդ գործունէութեան դեր կարծես իրեն օթեան ընտրած է Պոլսոյ հայոց մարմինը։ Ո՞վ ձեզմէ չը պիտի ապշէր թէ այս օրերս այցելած ըլլար Պոլսոյ։ Այդ Պատրիարքարանը որ մի քանի ամիս առաջ փոշիներու տակ ծածկուած էր կը շողայ, կը փայլի։ Մինչև իսկ փորձութիւններս կը շարժի ըսել թէ՝ շատ գործունէութիւնն ալ չարիք մ'է։ Ահա ազգային ժողովը, որ կեանքն է Պատրիարքարանի, կը թափառի Պատրիարքարանի սրահը, իբր հոգի մը Ախերոնի կայանքը։ Ամեն սրահ լի է, ամեն սենեակ բռնուած է և ազգային ժողովին համար «ոչ գոյ տեղի ուր դիցէ զգլուխս իւր։» Հոս պատրիարքն է իր հիւրերովը, հոն քաղաքական ժողովն է, անդին կրօնականը, ասոնց չեմ գիտեր ինչը։ Ով որ կանուխ վազէ այն ժողովը պիտի գտնէ սենեակ մը Պատրիարքարանի մէջ։ Ցնտեսական ժողովոյ անդամները, որք ազնուականութեան օրինաց հնազանդելու համար սովոր են ուշ հասնել, կը նստին կառքերնին և կը վերադառնան ուսկից որ եկեր էին։ Եթէ Թիւրքիոյ հայոց վիճակը չը բարւոքի մեզքը պէտք չէ վերագրել Պատրիարքարանի անգործութեանը։

Ցնտեսական խորհուրդը, որչափ որ իրեն տեղ մը չը գտնէր ժողովելու, բայց և այնպէս առանց յուսահատութեան գործի ձեռնարկած է։ Ցնտեսական խորհուրդն է որ կոչուած է գոհացնել մեր ամենէն կենսական պէտքերէն մին։ Ցաճախ ձեզ գրած ենք թէ ինչ ողորմելի կացութեան մէջ են մեր բոլոր գործերը, վասն զի Պատրիարքարանի մտքովը միշտ դատարկ է։ Ինչպէս կենտրոնական վարչութիւն մը ուժով կրնայ գործել երբ չատ անգամ մտքովի մէջ չը կայ ատակ հեռագիր դարնելու համար։ Պաշտօնեայք անվճար, դիւանները խառնաշփոթ, ոչ ոք ըրածը թողածը գիտէ։ Եւ ըսէք, ինչպէս կարելի է որ անօթի մարդ մը խելքը գլուխը աշխատի։ Այս դժբաղդ վիճակը ակներև էր. պատրիարք սրբազանը իր վերադարձէն ի վեր այս կէտին նուիրած էր իր գլխաւոր ուշադրութիւնը և կաշխատէր վարչութեան հետ միասին ասոր դարմանը փնտռել։ Միակ դարմանն էր լաւ տնտեսական խորհուրդ մը կազմել և յաջողեցան։ Ցնտեսական խորհրդոյ անդամներն են գործնական, կարող, գործէ հասկցող, աշխատող մարդեր։ Ցնտեսական խորհրդոյ ատենապետն է պ. Միհրան Սէթեան, որուն վրայ ամեն ոք չատ լաւ կը խօսի և նկատուած է իբր մի մեծ մասնագէտ տնտեսական խնդրոյ մէջ։ Պ. Սէթեանի հետ են պ. Գաբրիէլ Նորատունկեան, Արարատեան ընկերութեան նախագահը և ձեզ լաւ ծանօթ։ Պ. Նորատունկեան երբեմն տնտեսական խորհրդոյ ատենապետն էր և այն ատեն չատ բարեկարգեց Պատրիարքարանի դրամական գահոյը։ Ասիկայ մի քանի տարի առաջ էր և մենք այն ժամանակ երկար գրեցինք։ Այդ գահոյը այժմ աւելի և աւելի լայնափեռեկ է քան երբեմն, և վարչական յատկութիւններ ունեցող այս տեսակ անձինք դժուարաւ կարող պիտի ըլլան այդ գահոյէն արարչագործութիւն ընել։ Այս պարոններու հետ են ուրիշ հինգ անդամներ որք ամենքն ալ առևտրական, դրամական, վարչական գործերու մէջ վարժած պատուաւոր անձեր են, և ազգային գործերու մէջ են։ Այս ժողովը մեծ առաւելութիւն մը ունի, առաւելութիւն մը որ չատ կը պակսի Քաղաքական Ժողովոյ, և չը պիտի կրնայ ձեռք բերել։ Ցնտեսական խորհրդոյ անդամք զիրար չատ կը յարգեն, իրարու վրայ կատարեալ վստահութիւն ունին։ Այս վիճակին մէջ ուրիշ բան չը պիտի մտածեն բայց եթէ բարւոքել Թիւրքիոյ հայոց կենտրոնին դրամական կացութիւնը։ Այժմէն սկսած են գործի, չատ յոյս ունենք որ պիտի յաջողին, և եթէ յաջողին, կարծեմ ամենէն աւելի անոնց երախտապարտ պիտի մնանք։ Ինչ եղանակաւ պիտի գործեն։ Այս մասին մեզի աւելի մօտէն տեղեկութիւն տուին իրենց ծրագիրներուն վրայ։ Ա. այժմ սկսած են ուսումնասիրել առկախ մնացած բազմաթիւ խնդիրներ։ Հարիւր ութսուն գլուխներու կը բաժնուին այդ անլոյծ մնացած խնդիրներն։ Խորհուրդը այդ խնդիրներն լուծելու և ուրիշ ամեն տեսակ կարգադրութիւններ ընելու համար իւր մէջ աշխատութեանց բաժանում ընելու հարկը տեսած է և ըրած է հետևեալ կերպով։ 1) Ընդհանրական խնդիրք, 2) Գաւառական խնդիրք, 3) Կտակային խնդիրք, 4) Պոլսոյ թաղային հաշուական խնդիրք, 5) Կենտրոնական մնդուկի եկեմտական խնդիրք։ Ինչպէս կենթադրէք շատ երկար կը լլայ մի առ մի բացատրել թէ այս ամեն մէկ ճիւղերն ինչ ստորաբաժանումներ ունին, ինչ տեսակ խնդիրներ կը պարունակեն, և սակայն կարևոր էր ասոնք գիտնալ որպէս զի լաւ մը հասկանայիք թէ Թիւրքիոյ հայոց վարչութեան տնտեսական մեքենան ինչպէս լարուած է, որն է տակը կողմերը, որն է առաւելութիւնները և ինչպէս կը գործենք մեր նեղքին գործոց մասակարարութեան ամենէն գլխաւոր ճիւղին մէջ։ Սակայն ինչպէս միշտ այսպէս եղած է, մէկ կողմէն մեզի ժամանակը կը պակսի ընդարձակ բացատրութիւններ տալ, միւս կողմէ «Մշակի» էջերն չեն բաւեր ամեն խնդրոյ խոր քննութեանը։ Երբ շատ խնդրոյ վրայ հարեւանցիկ կանցնենք գոնէ մեզ դրդելու չէք։ Ցնտեսական խորհուրդը աշխատութեանց այս բաժանումը ընելով իւրաքանչիւր աշխատութեան համար իր մէջէն անդամ յատկացուցած է։ Այս անդամները այդ խնդիրներն կուսումնասիրեն և խորհուրդը իր որոշումները կուտայ։

Պատրիարքարանը, առ այժմ վերիվերոյ հաշուելով, տարեկան ծախք ունի 36,508 ռուպլի, իսկ եկամուտ 17,000 ռուբլի, ուրեմն բաց կը մնայ մօտ ծախքին կէսը։ Այդ ծախքը չատ աւելի պիտի ըլլայ եթէ ուղենան ամեն ինչ կանոնաւոր վիճակի վերածել։ Սակայն եկամուտներուն ալ ուշադրութիւն չեն ըներ։ Գոյացած եկամուտները իրենց ուժովը եկած են։ Այն տուրքերն են զոր պարտ են վճարել, ուզեն չուզեն, Պատրիարքարանի հետ գործ ունեցող հայերը։ Անշուշտ գիտէք թէ երբ հայերը կառավարութեան հետ ո և է յարաբերութիւն ունենան իրենց նոյնութիւնը ճանչցնելու համար Պատրիարքարանէ վկայագիր ուզենալու են։ Անցագիրի, անշարժ կալուածոց, առուծախի համար անհրաժեշտ են այս վկայագիրներն։ Բաց ասկէ հարսանեաց և այլն գործոց համար տուրքեր կան։ Հայ մը որ իրեն բաժին եղած ազգային տուրքը չը վճարէր ու գործով մը Պատրիարքարան կերթայ, այն ատեն մինչև որ այդ տուրքը չը վճարէ՝ գործը չեն տեսներ։ Ամենցմէ է Պատրիարքարանի հասատ հասոյթը։ Բայց կան Պոլսոյ թաղերուն տուրքերը, և գաւառներու տուրքերը որք եթէ կանոնաւոր գանձուին այն ատեն չատ կը բարւոքի Պատրիարքարանի դրամական վիճակը, մանաւանդ եթէ ազգային փոքրիկ տուրքերնիս տարեկան երկուք ու կէս ռուբլիէն մինչև եօթը ռուբլի կանոնաւոր կերպով վճարելու ըլլանք, Պատրիարքարանը նեղութիւնէ կազատի։ Պատրիարք սրբազանի մէկ տարուան հրաժարած մնալու միջոցին, երբ ամեն ինչ երեսի վրայ էր, թաղային և գաւառական տուրքերէ 17,000 ռուբլիի չափ առնելիք մնացած է զոր այժմ գանձելու հետամուտ պիտի ըլլայ տնտեսական խորհուրդը։ Ուրեմն իրենց աշխատութեանց բարի յաջողութիւն մաղթելով և նորհակալութիւններ տալով անցնինք վարչութեան ուրիշ մէկ ճիւղին։

Այդ ճիւղը մեր նոր կրթական խորհուրդն է, որուն վրայ քանիցս խօսեցանք։ Թէ Թիւրքիոյ հայոց համար ինչ աստիճան կարևորութիւն ունի կրթական խորհուրդ մը աւելորդ է ըսել։ Սակայն եթէ խնդիր մը կայ որ ամենէն աւելի անխնամ ձգած ենք, այդ ալ այս հարցն է։ Մեր կրթական խորհուրդներն մինչև հիմա չեն կազմուած այն նպատակաւ ինչպէս որ կը մտնենք։ Ինչ հիման վրայ պիտի ըլլայ Թիւրքիոյ հայոց կրթութիւնը։ Ինչ են մեր պէտքերը, ինչ է մեր ազգային նպատակը և ինչպէս անոր պիտի հասնինք կրթութեամբ, ասոնց վրայ երբեք խորհուած չէ։ Միայն Արարատեան ընկերութիւնն էր որ այս խնդիրներն սկսած էր լուրջ ուշադրութեան առարկայ ընել, Հայաստանի համար միայն, այն ալ ընկերութեանց միութիւնը վրայ հասաւ և մոռցուեցաւ գնաց։ Կրթական խորհուրդ մը գլխաւորապէս այս հարցերով զբաղելու է և մտածելու է այն միջոցները որով զանոնք կրնայ ի գործ դնել։ Բայց ես չեմ կարծեր որ հայ ազգին մէջ մարդ մը գտնուած ըլլայ աշխարհական թէ կրօնական որ ասոնց վրայ խորհած ըլլայ։ Կրթական խորհուրդներ կը կազմենք այնպիսի անձինքներէ որ բոլորովին խակ են այս հարցերու համար։ Հիմակուան կրթական խորհուրդն ալ մեծ մասամբ այսպէս է։ Գիտէք որ այս խորհուրդին գլխաւոր անդամները ջերմ պաշտպան են գրաբառ լեզուն առաջինը ընել մեր դպրոցաց մէջ։ Կրթական խորհրդոյ քով մի փնտռէր լայն գաղափարներ։ Ընդհանրապէս մեր Պոլսոյ վարժապետներուն միտքը չատ սահմանափակ է։ Ոչ մին ստացած է բարձր կրթութիւն, ոչ մի ինքնին չատ բան սորված է և ամենք քերականութիւն մը դաս տալէ զատ ուրիշ բանի կարող չեն։ Ցիմարութիւն է այսպիսեաց յանձնել Թիւրքիոյ հայոց կրթութեան կառավարութիւնը։ Բայց և այնպէս մեր սովորութիւնն է աչ ու ձախ չը հարուածել ազգին համար աշխատողները։ Երբ աշխատող մը անձնական շահ մը չունի, անձնական գաղտնի դիտաւորութիւններ չունի, փոխարինութիւն մը չը ստանար, անիրաւութիւն է յարձակիլ այնպիսեաց դէմ յախտուն կերպով, երբ ո և է չարիք մ'ալ չեն ըներ և ձեռքերնուն եկած աղէկութիւնն ալ չեն խնայեր։ Ինչ ընեն իրենք որ ձեռքերնուն եկածը կընեն, թէպէտ մեծ բան չէ։ Մեր ազգի կրթական խորհուրդն ալ աղէկ կաշխատի. եթէ միայն աշխատութեամբ գործ լմնար, ըսելիք չը կար։ Բայց չը հեռեիր Ցնտեսական խորհուրդին և աշխատութեանց բաժանում չընէր։ Կը տեսնես որ ամեն նիստի երկրորդական, փոքր հարցերով զբաղած են։ Պոլսոյ դպրոցներու մէջ հազար դէպքեր կը պատահին, կրթական խորհուրդը ընդհանրապէս ասոնք կարգադրելով ատեն կանցնէ, առանց միջոց մը մտածելու թէ ինչպէս կարճ ճամբայ մը գտնէ ասոնց լուծմանը համար։ Ուստի մի սպասէք որ ամեն ատեն կրթական գործոց վրայ ընդարձակ տեղեկութիւններ տանք. գործեր են որ ձեզ համար հետաքրքրութիւն մը չունի։ Այս անգամ եթէ լաւ գործ մը տեսաք կրթական խորհուրդը այն ալ այն ծրագիր է որ ներկայացուց Ազգ. հիւանդանոցի վարժարանին համար։ Երբ ժամանակաւ ձեզ գրած ենք հիւանդանոցի վրայ, ըսած ենք նաև թէ դպրոց մ'ալ ունի, կամ լաւ ևս, արբանոց մը։ Այս արբանոցին մէջ կը խնամուին Հայաստանցի, գաւառացի, Պոլսեցի որք անտէր մանչ տղաքներ, այնքան թուով, որչափ դպրոցի խեղճ չէնքը կրնայ պարունակել։ Կրնաք ենթադրել թէ այս տղաքը աղքատիկ կրթութիւն մը կառնեն, խեղճ կուտեն, խեղճ կը հագնին, խեղճ կը կրթուին։ Հիւանդանոցի հասոյթները սահմանափակ են։ Այժմ կրթական խորհուրդը ծրագիր մը կը ներկայացնէ հոգաբարձութեան որ այդ տղոց փոխանակ լեզուներու սկզբունքներ սորվեցնելու հայերէնի հետ արուեստ սորվեցնեն, ինչպէս է կօշկակարութիւն, դերձակութիւն և այլն։ Ցեղեկագիրը ընդարձակօրէն հոս օրինակելու պէտք չը կայ, բաւական է ըսել թէ այս խմաստով ողջ գաղափարներ յայտնուած են։ Ինչոր պ. Նիկողոսեան կը քարոզէր այսօր իրեն հակառակորդք իսկ իրենց ստորագրութեամբ այդ գաղափարներու գործադրութիւնը կը խնդրեն։ Չեմ գիտեր թէ պ. Նիկողոսեան եթէ քարոզած չըլլար այս գաղափարները արդեօք մէկուն միտքը պիտի գար։ Իրաւ է որ երեսուն և չորս տարի առաջ Զօրայեան Նիկողոս տեսնելով թէ Թիւրքիա ինչ փոփոխութիւն պիտի կրէ իր «Նկարագիր Ազգ. դաստիարակութեան» պատուական գրքին մէջ կը համոզէր պօլսեցիները որ դպրոցներու ուրիշ ուղղութիւն տան, իրենց տղոցը արուեստ սորվեցնեն, մանաւանդ հին արուեստաւորներու դրութիւնները փոխեն դի Պոլիս կը փոխուի, սակայն ով կարդացած է և կը կարդայ այդ հեռատես մարդուն գրութիւնները։ Եթէ այդ մարդուն խօսքերը մտիկ ընէին պօլսեցիք, այսօր բիւրաւոր դժբաղդ երիտասարդներ չէին թափառեր Պոլսոյ փողոցները։ Չը մոռնանք սա ալ ըսել թէ Զօրայեան ալ հաւատացին իրը բողոքական, Պատրիարքարանէն իր տունը կոխեցին, ինքն հիւանդանոցը մեռաւ աղքատիկ և մեռնելէն վերջն ալ վրան փառաւոր ոտանաւորներ գրեցին։ Այսօր քանի հոգի կայ որ յիշեն այդ ազգին ճշմարիտ բարեկամ անձը և գրածները կարդան։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս յայտնի է վերջին ընտրութիւններից յետոյ իտալական պարլամենտում յաղթող հանդիսացաւ իտալական ազատամիտ կուսակցութիւնը, և մանաւանդ այդ կուսակցութեան բուն դեմոկրատական բաժինը։ Այդ պատճառով, ազատամիտ կուսակցութեան ներգործութեան տակ, այժմ իտալական պարլամենտի մէջ հերթական հարցերը դարձել են տնտեսական և հասարակական, սոցիալական հարցեր։

—Վերջապէս մայրաքաղաքի լրագիրներում հրատարակված է Ֆրանսիական նոր մինիստրութեան կազմակերպութիւնը։ Այդ ցուցակը ճիշդ է երևում։ Ֆէրրի նշանակված է մինիստր նախագահ և լուսաւորութեան մինիստր, Շալմէլ-Լակուր,—արտաքին գործերի մինիստր, Վալդէկ-Ռուսօ,—ներքին գործերի, Մարտէն-Ֆէլիէ,—արդարադատութեան, Տիրօդէն, պատերազմական, Շարլ Բրէն,—ծովային, Տիրար,—ֆինանսների, Բայնալ,—հասարակաց աշխատանքների, Մոլին,—երկրագործութեան, Կոշրի,—փոստայի, Էրիսօն,—առևտրի մինիստր։

—Բերլինից հեռագրում են լրագիրներին, որ Գերմանիայի մայրաքաղաքի բօրսայում ռուսաց արժեթղթերը սկսում են գնի մէջ բարձրանալ և նրանց վրա աւելի և աւելի պահանջ է յայտնվում։

—Վիէննայից հեռագրում են որ աւստրօ-Ունգարական կառավարութիւնը իր համաձայնութիւնը տուեց Թիւրք կառավարութեանը որ Սաղուլլա-փաշա Թիւրքաց դեսպան նշանակվի Վիէննայում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վենդրամինի պալացցո (պալատը), ուր վախճանվեցաւ Բիխարդ Վագնէր, լաւ ծանօթ է ամենքին, ով երբ և իցէ եղել է Վենեցիա։ Այդ ամենահռչակաւոր շինութիւններից մէկն է «Canale Grande»-ի վրա։ Այդ պալատը կարող է համարվել վերածնութեան ժամանակների արուեստի ամենաօրինակելի արդիւնք։ Պալատը մի ժամանակ պատկանում էր Բէրրեան դքսուհուն և լրագիրների խօսքերով, ներկայումս կոմս Շամբորի սեփականութիւնն է կազմում։

* * *

Հռոմում վախճանվեցաւ Դուբլինի արքեպիսկոպոս, կարդինալ Մակ-Կէբ, Իրլանդիայի տեղապահը։ Դա մեծ կորուստ է այնտեղի չափաւոր կուսակցութիւնների համար։ Ցայտնի է, որ նա մի քանի հովուական թղթերի մէջ համոզում էր իրլանդական ժողովրդին հանդիստ լինել և սարսափ էր ազդում այդ ժողովրդի մէջ այն բռնի միջոցների դէմ, որ գործ էին դնում իրլանդական յայտնի կուսակցութիւնները։ Նա կարդինալի աստիճան ստացաւ 1882 թվի մարտի 27-ին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ Ֆինանսների մինիստրին իրաւունք է տրվում թոյլ տալ որտեղ նա յարմար կը դատէ տեղափոխել մի քաղաքից միւս քաղաք զրամական մասնաւոր գումարներ գանձարանի միջնորդութեամբ, վերցնելով 4% տեղափոխվող գումարից։

ԿԻԵՎ, 15 փետրվարի։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը հաւանութիւն տուեց Շպօլից մինչև Ուման մասնաւոր միջոցներով նեղանցք երկաթուղու կառուցման նախագծին։

ԽԱՐԿՕՎ, 15 փետրվարի։ Այսօր դատաստանական պալատայի մէջ սկսվեց մի ահագին գործի քննութիւնը, որ մեղադրում է պոլիցիական պրիստաւ Ֆիլիպպովին ծառայութեան ժամանակ գործած յանցանքների մէջ և բազմաթիւ հրէաներին, որոնք խումբ էին կազմել վագոնների մէջ գողութիւններ անելու և ուրիշ յանցանքներ գործելու։ Հասարակութիւնը չափազանց բազմաթիւ էր։ Տեղերը կուռով էին ձեռք բերվում։ Վկաները 179 հոգի են։ Մեղադրական ակտի ընթերցանութիւնը երկու ժամ տևեց։

ՍՕՖԻԱ, 15 փետրվարի։ Ռուսաց Կայսրի և Կայսրուհու թագադրութեանը ներկայ գտնվելու համար այստեղ Մոսկվա կուղարկվեն բոլգարական իշխանը և ազգային ժողովի պատգամաւորութիւնը միտրոպոլիտի առաջնորդութեամբ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

„ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“

Երրորդ տարուայ դասագիրքը

Երկրորդ տպագրութեամբ։

Գինը 40 կոպէկ է։

Գումարով առնողներին զիջուած կը լինի։ Ծախվում է կենտրոնական գրավաճառանոցում։

ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՊԱՀ *պաշտօն է որոնում ամենայն տեղ։ Ցանկացողներին վարձել խմբագրատան մէջ։*

1—3

ՊԱՐՏԻԶԻ *բոյսերի և* **ԾԱՂԻԿՆԵՐԻ** *թարմ սերմեր նոր ստացված են* **ԼԱՐՇԷԻ ՍԵՐՄԵՐԻ ԴԷՊՕՈՒՄ։**

Գոլովինսկի փողոց № 11։

1—5 (1)

ԵՐԿԱԹԷ

ԱՆԳԼԻԱԿԱՆ

ՄԱՀՃԱԿԱՆՆԵՐԸ



Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ռ., մահճակներ ծովային խոտով լցված 6—9 ռ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԻՋ։** *Նոյն տեղը մեծ քանակութեամբ* **ԱՄԱՆՆԵՐ,** *դանակներ պատառաքաղներով, երկաթէ* **ԳՐԻՉՆԵՐ,** *կողպէքներ, թիեր, աղամարդկերանց և կանանց* **ԹԱՄԲԵՐ,** *մատուցարաններ,* **ԿԼԷՕՆԿԱ,** *րէվոլվերներ,* **ՀՐԱՑԱՆՆԵՐ,** *ալբոմներ, կոնֆեկտներ, թէյ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։*

33—100

ԾԱԽՎՈՒՄ Է

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

ԾԱՂԿՈՒՆՔ

(*Թարգմանականք.* Ա. Մ. Ե. Պ.)

Ազնիւ թղթի վրա գեղեցկատիպ։

ԳԻՆԸ 25 կ.։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ, ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ռ.	10 կ.	*Թէյի հետ ամենաեղ*	1 ռ. 30 կ.
1 „	20 „	. . . . .	1 „ 60 „
1 „	40 „	. . . . .	1 „ 90 „
1 „	60 „	. . . . .	2 „ 20 „
1 „	80 „	. . . . .	2 „ 50 „
ամենալաւը	2 ռ.	. . . . .	3 „ ——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկոլադի և կակաո-ֆրայ էսսենցիայի, պալմերի բիսկվիտների, բազրի կոնֆեկտների, շեֆիլդի դանակների, տուրնեռի գրիչների, դաուի հրացանների, վեկլիի ռէվոլվերների, բարնսբիի թամբերի, մեկինի ամաններ, կոլմանի կրախմալ և մանանեխ, շվարցի ալբոմներ և այլն և այլն։

66—100

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿԱԹԷ ԹԵԼԻՑ *խողանակներ* (ՇՂԷՕՏԿԱՆԵՐ) *արծաթաջրած և վկայականով,* ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ, *որոնցով կարելի է գրել ամենակոշտ թղթի վրա, գեղեցիկ* ԹԷՑԱՄԱՆՆԵՐ *մի ֆունտ լաւ թէյի հետ 1 ռ. 65 կ.։ Ծախվում են անգլիական խանութի մէջ։ Նոյն տեղը 500 տեսակ գրիչներ* ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՁԵՌԱԳՐԻ *համար և շատ ուրիշ ապրանքներ ծախվում են* ԿԻՍԱԳՆՈՎ։

9—10

ԳԱԼԵՐԻԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՎՕՐՑՕՎԱՅԱ ՓՈՂՈՑ

ՊԱՀԵՍՏ **ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.**

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, վիէննայի ԹՕՆԷԹ *ֆաբրիկայի* ՄԷԲԷԼԻ *ամեն տեսակ, նոյնպէս* ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ *հայելիների համար և* ՀԱՑԵԼԻՆԵՐ, *լուսանկարների համար* ԱԼԲՈՒՄԻ *թուղթ, բէլգիայի* ԱՊԱԿԻՆԵՐ *պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս* ՄԱՐՄԱՐԻՕՆ *քար,* ԹՈՒՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ *էմայլով,* ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ *և ուրիշ շատ ապրանքներ։*

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

Հինգշաբթի, փետրվարի 17-ին հայ դերասանական խումբը կը ներկայացնէ

ՑՕԳՈՒՏ

Պ. ՊԱՐՈՆ—ՍԱՐԳՍԵԱՆԻ

ԱՐՔԱԿ II

Պատմական ողբերգութիւն 5 արարուածով

Անտրակտներից մէկի ժամանակ ա. **ՓԱՇԱՅԵԱՆ—ՏԷՐ—ԳՐԻԳՈՐԵԱՆ** *կերգէ*

Սկիզբն է $7^1/_2$ ժամին։

Տեղերի գները սովորական։

3—3

ՎԻԷՆՆԱՅՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան“ դադարեցրած թերթի տեղ է հրատարակվում այդ նոր գիրը։ „L'Oriental“ *թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ։*

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ *խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևյալ հասարակ հասցէով.* Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt

---

„ՄՇԱԿԻ“ ՀՆՈՒԱԳԻՐ (ՓԵՏՐՎԱՐԻ 15)

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Մուրհակների կուրսը 3 ամսով Լոնդոնի վրա	$24^1/_4$ պէնս
» » 3 » Ամստերդամի վրա	»
» » 3 » Համբուրգի վրա	$206^1/_4$ մարկ
» » 3 » Փարիզի վրա	254 ֆրանկ
Ոսկի	8 ռ. 14 կ.
Արծաթ	1 ռ. 35 կ.
Մաքսային կուպօններ	8 ռ. 14 կ.
Բօրսային դիսկօնտներ	$6^3/_4$%
Պետական բանկի 5% առմամբ 1-ին շրջանի	$95^1/_4$ ռ.
» » » » 2 »	$92^1/_4$ ռ. 62 կ.
» » » » 3 »	$91^1/_4$ ռ.
» » » » 4 »	$91^1/_2$ ռ.
» » » » 5 »	91 ռ. 62 կ.
Արևելեան 1 փոխառութեան առմամբը	92 ռ.
» 2 » »	91 ռ. 87 կ.
» » » »	91 ռ. 87 կ.
Ներքին 5% 1 փոխառութեան առմամբը	$221^1/_2$ ռ.
» » 2 » »	$216^3/_4$ ռ.
$5^1/_2$% բենատ	$98^3/_4$ ռ.
Ակցիաներ փոխառու բանկի	445 ռ.
» Միջազգային բանկի	365 ռ.
» Վոլժսկո—Կամսկի բանկի	424 ռ.
» Սիբիրի առևտրական բանկի	318 ռ.
» Ռուսաց արտաքին առևտրի բանկի	272 ռ.
» Ռուսաց կալուածական կրեդիտի կենտրոն. բանկի	»
» Ռուսաց երկաթուղիների գլխաւոր ընկ.	262 ռ.
» Բիբենկո-Վոլոգովկի երկաթուղու	61 ռ.
» Ս. Պետերբ. կրակի դէմ ապահովութեան ընկ.	»
5% դրաւական թերթեր փոխադ. կալուած. կրեդ. ընկ.	$130^3/_4$ ռ.
6% » խարկովի կալուած. բանկի $43^1/_2$ տարի	92 ռ.
» » Վիլնոյի » » » »	$91^3/_4$ ռ.
» » Պոլտավայի » » » »	91 ռ. 87 կ.
» » Մոսկվայի » » » »	97 ռ. 12 կ.
» » Բեռ.—Տավ. » » » »	$92^1/_4$ ռ.
$5^1/_2$% » Խերսոնի » » » »	$89^1/_2$ ռ.
Բօրսայի տրամադրութիւնը	Թույլ
Յորեն ռուսաց 10 պուդ	13 ռ. 60 կ.

„ՀԻԻՍԻՍԱՑԻՆ“ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Յորեն սակսոնկա » »	13 ռ. 85 կ.
Յորեն	Հանդարտ
Հաճար 9 պուդ	8 ռ. 80 կ.
Հաճար	Հանդարտ
Վարսակ 6 պուդ	4 ռ. 80 կ.
Վարսակ	Հանդարտ
Գարի 8 պուդ	8 ռ. 40 կ.
Վուշի սերմ 9 պուդ	$14^1/_4$ ռ.
Հաճարի ալիւր 9 պուդ	$8^3/_4$ ռ.
Ալիւրը	Հանդարտ
Կանեփի թելերի	39 ռ.
» սովորական	»
» ընտիր	41 ռ.
Թել Սիբիրի	$40^1/_2$ ռ.
» Կամայի	40 ռ.
Վուշ	Ամուր
Կանեփ	»
Կրուպչատկա Սարատովի 5 պուդ	$12^1/_4$ ռ.
» Նիժեգորոդեան 5 պուդ	12 ռ.
Լիլիսարի ձէթ քաղցր	8 ռ. 85 կ.
Կերոսին ամերիկական	2 ռ. 40 կ.
» ռուսաց	1 ռ. 30 կ.
Ձէթ	10 ռ.
Ճրագու դեղին մոմի համար 2 ունցամ հաշուած 1 տեսակ	72 ռ.
» սապոնի	71 ռ.
Խէժ ֆինլանդական	»
Կովի իւղ Սիբիրի	$9^3/_4$ ռ.
Պղինձ կտորներով պուդը	»
» թերթերով »	»
Երկաթ թերթերով պուդը	»
Կովի կաշի չոր, պուդը	»
» » հում »	»
Սպիրտ 40% վեդրօն	»
Շաքար բաֆինադ 1 տեսակ պուդը	8 ռ. 80 կ.
» » 2 » »	»
Շաքարաւազ	8 ռ. 5 կ.
Պօտաշ բերկովից	28 ռ.

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Февраля 1883 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.